I

Ա. ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ «ՄԱՅՐԱՄՈՒՏԻ ՇԵՄԻՆ» ԳՐՔԻ ԱՌԹԻՎ

ՎԱՐԴԳԵՍ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Իմ կյանքում ոչ քիչ թվով դրախոսություններ եմ գրել, կարծիքներ հայանել շատ գրքերի մասին, և այնուամենայնիվ սլիտի խոստովանեմ, որ թերևս ոչ մի գիրք գնահատելիս այնպիսի դժվարության չեմ հանդիպել, ինչպես Ա. Կիրակոսյանի սույն գրքի պարագայում[1]: Եվ ես կանխավ գիտեմ, թե որն է դրա պատճառը. Ա. Կիրակոսյանի «Մայրամուտի շեմին» վերտառությամբ հուշերն ու մտորումները, ըստ էության, մեր ժողովրդի անցած դարի 40–90-ական թվականների, մի ամբողջ հիսնամյակում անցած պատմության սոսկ հուշապատումը չէ, այլ նրա վերլուծական շարադրանքը կատարված ականատեսի, դեպքերին մասնակցի, և որն առավել կարևոր է, հանրապետության սոցիալ-տնտեսական և դիտամշակութային կյանքին իր անուրանալի վաստակը բերած մարդու խորաթափանց գրչով: Եվ իզուր է հեղինակը ջանում ընթերցողին համեստորեն համոզել, թե իր նպատակը չի եղել տալու «դեպքերի քննական տեսությունը և գնահատականը». չեչտենք թե՛ մեկը և թե՛ մյուսը առկա են գրքում, և դա նրա հուշապատման ու մտորումների ամենաէական կողմերից մեկն է, հանգամանք, որը գրքի հարուստ փաստական պատումը բարձրացրել է գիտավերլուծական մակարդակի դրանով իսկ ընթերցողին մղելով ամեն քայլափոխի ցուցաբերելու սթափ, շարադրանքն ըստ արժանվույն գնահատելու մոտեցում:

Այս վերապահումով հանդերձ Ա. Կիրակոսյանի «Մայրամուտի շեմին» գիրքը, հարկավ, հուշապատում է, բայց նաև խոհեր ու մտորումներ մեր մոտիկ անցյալի, ներկայի և գալիքի մասին, ես կասեի ուսուցողական մի ձեռնարկ, մանավանդ Հայաստանի ներկա կառավարողների համար, եթե, իհարկե, նրանք ցանկություն և ուշիմություն ունենան ունկնդրելու իրենց փորձառու ու բանիմաց նախորդի իմաստալից խոսքին, դասեր քաղելու նրա խորհուրդներից ու ասածից:

«Մայրամուտի շեմին» հուշադրությունը սկզբից մինչև վերջ ընթերցվում է համակ ուշադրությամբ: Եվ դրա պատճառը միայն մեր ժամանակակցի հարուստ և «բազմաժանր» կենսագրությունը չէ, այլ նաև դեպքերն ու դեմքերը տրամաբանական կուռ շարադրանքով, հաճախ նաև պատկերավոր ներկայացնելու նրա դրելաոճը, և թեև շարադրանքի բերումով հաճախ ընդհատումները հաջորդում են մեկը մյուսին, դա չի խախտում գրքի ամբողջականությունը, որը, ինչպես ակնարկվեց, հանրապե-

---

[1] *Ալեքսան Կիրակոսյան. Մայրամուտի շեմին. Հուշեր և մտորումներ. Երևան, 2002, 288 էջ:*

տության վերջին տասնամյակների պատմության խորացված ներկայացումն է իր հիմնական գծերով նրա տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքի բնութագիր-պատկերը:

Շեշտենք, որ հեղինակը գրքի շարադրանքը վարում է պատասխանատվության խոր զգացումով, երկրի ու ժողովրդի հանդեպ տածած անսահման սիրով ու հարգանքով, տեղ-տեղ էլ կարեկցանքով, սրտագին ու հիմնավորված սփոփանքի զգացումով:

Գիրքն ունի 7 բաժին տարբեր ծավալի ու չափի: Իր և իր ընտանիքի մասին հակիրճ պատմելուց հետո հեղինակը մնացած չորս բաժիններում ծավալվում է իր հիմնական ասելիքի շուրջը. դրանք են՝ Հայրենական պատերազմի ռազմաճակատների և ետպատերազմյան տարիներ, մշակույթի աշխարհում և քաղաքական մի քանի դիմանկարներ:

Ա. Կիրակոսյանի պատումը բովանդակալից է, ուշագրավ և շատ կողմերով ուսանելի, որովհետև այդպիսին է եղել նրա բուն կյանքի ճանապարհը, որը նա հավաստում է հետևյալ ստույգ ձևակերպմամբ. «Ես Հայաստանի երեք հանրապետությունների ժամանակակիցն եմ և պատկանում եմ քառասնական թվականների այն սերնդին, որը աշխարհ եկավ XX դ. սկզբի նզովյալ տարիներին և անցավ դժվարին, տատասկոտ և, հիրավի, հերոսական ճանապարհ, ըմբոշխնեց մարտական փառքի և ստեղծագործ աշխատանքի բերկրանքը, բայց արդյունքում ապրեց մեծ հիասթափություն՝ ականատես դառնալով այդքան դժվարությամբ, մեծագույն ջանքերով ստեղծված արժեքների ոչնչացմանը, կատարված գործի ուրացմանը» (էջ 3):

Ամեն մի ազնիվ քաղաքացի հայ, որ իր մաշկի վրա զգացել է այդ տարիների թե՛ բերկրանքը և թե՛ տառապանքը, աներեր կստորագրի հեղինակի այս բանաձևման տակ, որովհետև այն ճշմարիտ է և անառարկելի:

Հեղինակը հակիրճ, բայց բովանդակալից շարադրանք է նվիրել բանակում և Հայրենական պատերազմի ռազմաճակատներում իր անցած ծառայության վեց տարիներին: 1922–1923 թթ. ծնվածների միայն 2–3 տոկոսը տուն վերադարձավ, շեշտադրում է նա և ասա անգրադառնալով դեներալ Պավլովի և մյուսների գնդակահարությանը, իրավացիորեն նշում, թե նման իրավիճակներում քավության նոխազի դերում հայտնված մարդիկ «դաժանորեն պատժվում են ոչ այնքան իրենց, որքան պատժողի սխալների համար» (էջ 22): Հստակեցնելով միտքը, նշենք, որ պատժողը Ստալինն էր, որը դա անում էր սեփական մեղքերը վարագուրելու համար:

Ես նկատել եմ և սեփական փորձից էլ դիտեմ, որ պատերազմի բովով անցած շատ մարդիկ այնքան էլ չեն սիրում տարածվել այդ թեմայի շուրջը՝ «վերջ ի վերջո պատերազմ էր և ում վիճակվել էր պետք է մասնակցեր նրան»: Փաստորեն գրեթե այդպես է վարվել նաև Ա. Կիրակոսյանը՝ պատերազմին ունեցած իր մասնակցությանը նվիրելով ժլատ պարբերություններ, թեև հնարավորություն ուներ տարածվելու որքան ուզես...

Գրքի ծանրակշիռ մասը (39–218 էջեր) հեղինակի ետպատերազմյան տարիների աշխատանքային գործունեության նկարագիրն է՝ գործունեություն, որն անցել է Սպիտակում, Անիում, Ամասիայում, Ղուկասյանում, Հոկտեմբերյանում, իսկ 1956-ից՝ Երևանում: Այդ տարիներին էր, որ

նա դարձավ հանրապետության ամենաճանաչված, ես կասեի նաև անկախ զբաղեցրած պաշտոնից, ամենաազդեցիկ և հեղինակավոր գործիչներից մեկը: Նշված էջերում երևում է Ա. Կիրակոսյանի բոլորանվեր մասնակցությունը հանրապետության վերընթաց զարգացմանը, և դա ոչ միայն ի պաշտոնե... Ալեքսան Մատվեիչը, անկախ զբաղեցրած պաշտոնից, շարունակ հանրապետության բազմաբնույթ զարգացման կիզակետում էր, ջանալով որքան հնարավոր է նպաստել դրան:

Ա. Կիրակոսյանի «Մտորումների» որ հատվածն էլ վերցնենք, կտեսնենք փաստերի առատ ընդգրկում և դրանց յուրովի, ճշմարիտ մեկնաբանում: Այս առումով հատկապես կուզենայի առանձնացնել մշակույթի և քաղաքական-հասարակական գործիչներին նրա տված բնութագրերն ու գնահատականները (վերջին երկու գլուխները). դրանց հետ անհնարին է չհամաձայնել, քանի որ դրանք ուղղամիտ ու բանիմաց մարդու խոսքն են ուղղված հայտնի մարդկանց հասցեին, որոնց մի մասը նրա գործընկերներն են, իսկ մյուսները մտերիմներ և պարզապես մոտիկ ծանոթներ:

Ավարտելով մեր հակիրճ խոսքը, կարծում ենք, պատմաբանները, առհասարակ հասարակագետները շատ բան կքաղեն Ա. Կիրակոսյանի խորհուրդ-մտորումներից. կասկած չունեմ, որ այս գիրքը երևույթ է մեր պատմահուշագրական դրականության մեջ և դեռ երկար ժամանակ կպահպանի իր որոշակի արժեքն ու ազդեցությունը: